Եկայ մո՛տ ինձ, բոլոր հոգնածներ և բեռնավորվածներ...
Մատթէոս 11:28

ԲԱՐԻ ԼՈՒՐ

Հունվար, 2018թ.
N 1 (96)

Լույս է տեսնում 2009թ. դեկտեմբեր

ԵԿԵՔ ԱՂՈԹԵՆՔ

ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՀԱՎԱՏՔԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐ

ԲԱՐԻ ԼՈՒՐ

ԱՄԱԳԻՐ

Հունվար, 2018թ. №1 (96)

Լույս է տեսնում 2009թ. մայիսից

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ ԿԱՐԴԱՑԵՔ

Եկե՛ք աղոթենք.....1

Վասիլի Պավլով (շարունակություն).....3

Ինձ Տերն է ուղարկել (շարունակություն).....5

Սրտի քարը.....9

Տերն արմատապես փոխեց իմ կյանքը.....11

Թագավորի այցը.....16

Սիրելի՛ ընթերցողներ, խնդրում ենք աղոթել, որ թերթի միջոցով տարածվի Ավետարանի Բարի Լուրն ու ցանվեն ճշմարտության սերմերը, որպեսզի մարդիկ դառնան Աստծուն և հավիտենական կյանք ունենան:

Թերթի վերաբերյալ ձեր առաջարկություններն ու վկայությունները կարող եք ուղարկել խմբագրություն: Մենք սիրով հաշվի կառնենք ձեր արձագանքները:

Հեռ.՝ 093-532-526, 093-954-930, էլ.փոստ՝ bari_lur_09@rambler.ru

ԵԿԵ՛Ք ԱՂՈԹԵՆՔ

Սիրելինե՛ր, մենք ապրում ենք վերջին ժամանակներում: Մեղքը գնալով ավելի ու ավելի է ծանրանում երկրագնդի վրա: Անցնում է հունձքի ժամանակը, և դեռ շատ հոգիներ կան, որ փրկված չեն ու տառապում են մեղքի և մահվան գերության մեջ: Երկրագնդի բնակչությունը վախի ու տագնապի մեջ է, բոլորը սպասում են, թե ինչ է լինելու հետո: Այստեղ տեղին է հիշել Երեմիա 9:21 խոսքը, որտեղ ասվում է. «Վասն զի մահը մինչև մեր պատուհանները ելաւ, մեր պալատները մտաւ, որպէս զի փողոցներէն տղաքները՝ ու հրապարակներէն երիտասարդները բնաջինջ ընէ»:

Մարդիկ, գտնվելով անհայտության ու քաոսի մեջ, չգիտեն, թե ինչ նոր անակնկալներ կարող են լինել վաղը կամ մյուս օրը: Շատ անհավատներ քրիստոնյաներին են հարցնում, թե ինչ է լինելու կամ ինչ է սպասվում մոտ ժամանակներում: Հասկանալի է, թե որքան կարևոր է, որ այսօր եկեղեցիները և ամեն մի քրիստոնյա ունենա Աստծուց ուղարկված խոսքը, որպեսզի շտկի իր ճանապարհներն ու վերականգնի Աստծու հետ ունեցած հաղորդակցությունը: «...Եւ Իսաքարի որդիներէն երկու հարիւր իմաստուն իշխաններ, որոնք ժամանակներուն համեմատ գիտէին թէ Իսրայէլ ի՛նչ ընելու է. ու անոնց բոլոր եղբայրները անոնց բերանը կը նայէին» (Ա Մնաց. 12:32): Սակայն այսօր շատ քիչ է, կամ էլ գրեթե բացակայում է Աստծու կողմից եկեղեցիներին ուղարկված խոսքը: Նրանք չեն ձգտում կենդանի հաղորդակցություն ունենալ Աստծու հետ: Բայց Տերը, լինելով հոգատար Աստված, Իր եկեղեցիներին ասելու խոսք ունի, ինչպես ասել է Փոքր Ասիայի բոլոր յոթ եկեղեցիներին: Տերը այնտեղ ամեն մեկին առանձին հայտնում է Իր խոսքը՝ թե՛ խրատելու, թե՛ հորդորելու ու թե՛ հանդիմանելու նպատակով (Հայտն. 2-4-րդ գլուխներ):

Աստված ուզում է հայտնել Իր Խոսքը նաև ամեն մի քրիստոնյայի, եթե վերջինս փափագում է ու փնտրում: Դրա համար մենք պետք է ձգտենք Աստծու հետ հաղորդակցության ու փափագենք լսել Նրա կենդանի Խոսքը: Այս կապակցությամբ Ամբակում մարգարեն 2:1-ում ասում է. «Իմ պահպանութեանս տեղը պիտի կենամ, ու պարսպին վրայ պիտի կայնիմ, ու պիտի սպասեմ որ տեսնեմ թէ ինծի հետ ի՛նչ պիտի խօսի...»:

Ինչպես տեսնում ենք, մարգարեն տեղից չի հեռանում, կանգնում է պարսպի վրա ու սպասում է, մինչև Տերը խոսի իր հետ ու պատասխանի իրեն: Երեմիա մարգարեն էլ Ողբ Երեմիա 2:18-19-ում ասում է. «....Ո՛վ Սիոնի աղջկան պարիսպը, ցորեկ ու գիշեր հեղեղի պէս արցունք թափէ. քեզի հանգիստ մի տար, աչքիդ բիբը չդադարի: Ելիր, գիշերով աղաղակէ գիշերուան պահերուն սկիզբը. քու սիրտդ ջուրի պէս թափէ Տէրոջը երեսին առջև, ձեռքերդ անոր վերցուր քու տղոցդ հոգիներուն համար, որոնք ամէն փողոցներուն գլուխը անօթութենէ կը մարին»:

Այն ժամանակ Իսրայելը գերի էր քշվում դեպի Բաբելոն, և ժողովուրդը քաղցի ու ծարավի մեջ մարում էր: Իսկ այսօր մարդիկ ոչ թե ֆիզիկական, այլ հոգևոր գերության ու կռապաշտության մեջ են: Նրանք, չստանալով հոգևոր կերակուր, մարում են հոգևոր ծարավից ու քաղցից: Մենք պետք է աղաղակենք նրանց համար, հանգիստ չտանք մեր անձերին, ձեռքներս դեպի երկինք բարձրացնենք՝ մեր երեխաների, մեր հարազատների, մեր բարեկամների ու մեր ազգի համար:

Ղուկաս 21:34-36-ում ասվում է. «Իսկ դուք զգուշացէք ձեր անձերուն. չըլլայ որ սիրտերնիդ կերուխումով ու գինովութիւնով և աշխարհային զբաղմունքներով ծանրանայ, ու յանկարծակի այն օրը ձեր վրայ հասնի. վասն զի բոլոր երկրին երեսը բնակողներուն ամէնուն վրայ որոգայթի մը պէս պիտի հասնի: Ուստի արթուն կեցէք, ու ամէն ատեն աղօթք ըրէք, որ արժանի ըլլաք այն բոլոր ըլլալու բաներէն ազատուելու և Որդւոյ մադոյ առջև կայնելու»:

Թանկագի՛ն եղբայրներ ու քույրեր, մեզ մոտ՝ Հայաստանում, այդ կապակցությամբ հայտարարել ենք ծոմապահություն մինչև այս տարվա ապրիլ ամսվա վերջը: Ամեն շաբաթ երեք օր ծոմ ենք պահում, աղոթք ու աղաչանք բարձրացնում ամենակարող Աստծուն՝ մեր երեխաների, մեր ազգի, մեր եկեղեցիների ու մեր անհատական արթնության համար: Սիրելինե՛ր, մենք հավատում ենք, որ Տերը պիտի լսի մեր աղոթքներն ու մեր աղաչանքները՝ փրկելու մեր ազգն ու մեր ժողովրդին: Աղոթում ենք նաև բոլոր այն երկրների քրիստոնյաների համար, որտեղ նրանք հալածվում են հանուն Քրիստոսի: Ցանկանում ենք, որ Աստված նրանց համբերություն ու զորություն տա՝ հավատարիմ մնալու Տիրոջը մինչև վերջ: Ամեն:

Մամիկոն Ղազարյան

ՎԱՍԻԼԻ ՊԱՎԼՈՎ

Շարունակություն: Սկիզբը՝ նախորդ համարում

Վասիլին վերադառնում է հարազատ տուն: Մի քանի տարի հետո Սլաբոձեյա գյուղի մոտ կառուցվում է մի նոր գյուղ, որտեղ և ապրում են Վասիլին ու մի շարք հավատացյալներ: Գյուղի անունը դնում են «Հույս»: Մինչև այժմ էլ այդ գյուղը կրում է այդ անունը: Անցնում են տարիներ, և այդ գյուղում հիմնվում է բապտիստական մի մեծ եկեղեցի: Նրանք իշխանություններից ստանում են Աստվածաշունչ քարոզելու թույլտվություն: Վասիլին լսել էր Սուրբ Հոգով մկրտված եկեղեցու մասին, բայց միշտ սխալ էր հանում նրանց: Դա տևեց այնքան ժամանակ, մինչև մի օր մասնակցեց Սուրբ Հոգով մկրտված «Ավետարանի հավատքի քրիստոնյաների» հավաքույթին:

Հետագայում նա այդ մասին այսպես է գրում.

«20 տարի ես բապտիստ եմ եղել և միշտ քարոզել եմ Քրիստոս, ընդունել եմ միայն ջրով մկրտությունը այնքան ժամանակ, մինչև մի օր Օդեսայում մասնակցեցի Սուրբ Հոգով մկրտված «Ավետարանի հավատքի քրիստոնյաների» հավաքույթին:

Ես, որ նախկինում հալածում էի Հոգով մկրտության վարդապետությունը, սկսեցի մտածել այդ ուղղությամբ: Ես սկսեցի խորությամբ ուսումնասիրել Աստծու Խոսքը և աղոթում էի Աստծուն, որ Նա ինձ ցույց տա ճիշտ ճանապարհը: Մասնակցելով Օդեսայի հավաքույթին՝ զգացի Աստծու ներկայությունը և լսեցի մի ձայն, որն ինձ ասում էր. «Սավո՛ւղ, Սավո՛ւղ, ինչո՞ւ ես ինձ հալածում, դժվար է քեզ խթանի դեմ կից զարնել»: Ես ընկա ծնկներիս վրա և սկսեցի աղիողորմ լացով աղոթել: Այդ ժամանակ մկրտվեցի Սուրբ Հոգով: Դա 1924թ. օգոստոսի 27-ն էր: Երբ ես վերադարձա իմ եղբայրների մոտ և պատմեցի, որ մկրտվել եմ Սուրբ Հոգով, նրանք ինձ չընդունեցին և դուրս հանեցին համայնքից: Ես աղոթում էի եղբայրներիս համար, որպեսզի նրանք ևս ընդունեն Սուրբ Հոգով մկրտվելու վարդապետությունը: Շուտով նրանցից շատերը եկան, զղջացին և Սուրբ Հոգով մկրտվեցին: Փառք Տիրոջը»:

Հարևան գյուղում իշխանության ներկայացուցիչներից մեկի կինը բռնվել էր չար ոգով: Ամուսինը կա-

պում է կնոջը և տանում հոգեբուժարան: Ճանապարհին նրան տեսնում է Վասիլին ու հարցնում, թե ինչո՞ւ է կապել կնոջը: Լսելով պատասխանը՝ հարցնում է, թե արդյոք նա հավատո՞ւմ է, որ Աստված կարող է բժշկել իր կնոջը: Ամուսինը պատասխանում է, որ եթե Աստված բուժի՝ ինքը կհավատա: Վասիլին նրան հանձնարարում է, որ կնոջը տանի թողնի Նադեժդա գյուղում, իսկ երեք օր հետո գնա նրա ետևից: Մարդն այդպես էլ անում է: Վասիլին երեք օրով գնում է մի ուրիշ վայր՝ քարոզելու: Երրորդ օրը, երբ վերադառնում է, տեսնում է, որ եղբայրները որքան էլ աղոթել են, ոգին կնոջ միջից դուրս չի եկել: Երբ Վասիլին մի քանի եղբայրների հետ առանձնանում և աղոթում է, ոգին կնոջ միջից դուրս է գալիս: Այս տեսնելով՝ ամուսինն ընդունում է Աստծուն որպես Տեր ու Փրկիչ: Այս ամենի մասին լսում են հարևան գյուղացիները, բարեկամները, և նրանցից շատերն սկսում են մասնակցել ժողովներին:

Աստված Վասիլի Պավլովին շատ շնորհներով էր օծել: Վասիլին մարդկանց տեսնելով կարողանում էր ասել, թե նրանք ինչ մեղքի մեջ են: Մի օր հավատացյալներից մեկը աշխատանքի վայրից մի քանի մեխ է գողանում: Երբ գնում է ժողովի, մինչև հավաքույթի սկսելը Վասիլին նայում է այդ մարդուն և ասում. «Այն, ինչ որ քոնը չէ, գողացել ես, ե՛տ վերադարձրու: Նայի՛ր, որ չգցես գրպանիցդ, քանի որ ձախ գրպանդ ծակ է»: Իսկ նրա միջոցով հիվանդություններից բժշկվելը դարձել էր սովորական երևույթ:

Шествие пятидесятницы, том 1

Աստված լսում է աղոթքը

Օլգա և Նաստյա Լեմեշյուկները երկու քույրեր էին, մանկավարժական կրթություն ունեին և աշխատում էին Արևմտյան Բելառուսի դպրոցներում: Նրանք ապաշխարել էին և իրենց նվիրել Աստծուն ծառայելուն: Օլգա Լեմեշյուկի հետ այսպիսի դեպք է պատահում: Մի մարդ դաշույնը ձեռքին մեկ ուրիշի ետևից է ընկնում, որ նրան սպանի: Վերջինս մտնում է Օլգայի տուն և ուզում է այնտեղ թաքնվել, բայց հետևողը հասնում, բռնում է նրան և ձեռքը բարձրացնում է, որ սպանի զոհին: Օլգան անմիջապես կանչում է Աստծուն. «Աստվա՜ծ իմ, թույլ մի՛ տուր, որ արյուն հեղվի իմ տան մեջ: Թող սպանություն չկատարվի իմ աչքերի առաջ և այն տեղում, որտեղ այնքան աղոթքներ ու գոհություններ են բարձրացրել Քո զավակները: Ամեն»:

Աստված լսում է Օլգայի աղոթքը. մարդասպանի ձեռքը քարանում է օդի մեջ, և նա չի կարողանում իրականացնել իր մտադրությունը:

«Слово Христианина» ***ամսագրից***

ԻՆՁ ՏԵՐՆ Է ՈՒՂԱՐԿԵԼ

Շարունակություն: Սկիզբը՝ նախորդ համարում

Հայր Աստծու օրհնությամբ և օգնությամբ իմ ապաշխարության առաջին տարում՝ 1968թ., Կոշ գյուղում, որտեղ ծնողներս էին ապրում, եկեղեցի հաստատվեց, ու Սուրբ Հոգու մկրտություններ եղան: Այդ եկեղեցին գործում է մինչ օրս: 1973թ., դարձյալ Հայր Աստծու օրհնությամբ և օգնությամբ, Չարենցավան քաղաքում հաստատվեց եկեղեցի, որը նույնպես մինչև օրս գործում է: Թող Աստված փառավորվի:

Եկեղեցում ծառայելու ընթացքում իշխանությունների կողմից եղել են հետապնդումներ ու հալածանքներ, և մինչև հեռացվելս շարունակ քննել են ինձ:

1976թ. մի օր իմ աշխատասենյակ մտան երկու հոգի և ինձ ասացին, որ միլիցիայից են: Ես սիրով ընդունեցի նրանց: Նրանք ինձ ասացին. «Քանի որ դու զբաղված ես, քեզնից միայն երեսուն րոպե կխլենք»: Մեկն ուկրաինացի էր, մյուսը՝ ռուս: Նրանցից մեկը ծոցագրպանից ժամացույց հանեց, դրեց սեղանի վրա՝ իմ առջև: Հետո հարցեր տվեցին, թե ինչպես եմ ես հավատացյալ դարձել: Նրանք ինձ ասացին, որ իրենք մինչև իմ մոտ գալը գնացել են Լենինյան շրջկոմի առաջին քարտուղարի մոտ, և նա իմ մասին լավ կարծիք է հայտնել: Շրջկոմի առաջին քարտուղարի մոտ գնալու նպատակն եղել էր ինձ բարձր պաշտոն տալը, որպեսզի ես հեռանամ եկեղեցուց: Բայց երկար քննությունից հետո տեսան, որ դա անհնար է: Վեր կացան գնալու և ինձ ասացին, թե իրենք քննությունները չեն վերջացրել, դեռ պիտի շարունակեն քննել ինձ: Հաջորդ օրը զանգեցին տուն ու խնդրեցին, որ իրենց հանդիպեմ: Երբ հանդիպեցինք, այս անգամ ինձ առաջարկեցին, որ միջնորդեմ՝ եկեղեցին գնա գրանցման, փոխարենը իրենք պարտավորվում են մեր հավաքույթներն անցկացնելու համար համապատասխան տարածք հատկացնել: Ես նրանց պատասխանեցի, որ մեր կողմից դա հնարավոր չէ, քանի որ գրանցվելիս իրենք անկետա են ներկայացնում ստորագրելու, իսկ այդ անկետան չի համապատասխանում Աստվածաշնչի սկզբունքներին: Նրանք մի պահ հապաղեցին, որից հետո Սուրբ Գրքից ինձ հիշեցրին այն համարը, որ իշխանություններին հնազանդ պետք է լինել: Ես պատասխանեցի. «Այո՛, բայց ոչ միայն այդքանը, նաև՝ ամեն բարի գործերի պատրաստ գտնվել»: Նրանք ինձ հակառակ ոչինչ չասացին:

Երբ պետք է բաժանվեինք, հիշեցրին, որ նորից պետք է հանդիպենք...

Երրորդ անգամ նույնպես հանդիպեցինք, և մեր խոսակցության նյութը առաջին և երկրորդ հանդիպումների ժամանակ շոշափվող հարցերի շուրջն էր, այսինքն՝ նրանց հարցերն ու իմ պատասխանները նույնն էին: Նրանց վերաբերմունքը իմ նկատմամբ շատ նուրբ ու կիրթ էր:

Մեր խոսակցության ժամանակ ես հարցրի, թե ինչ վատ բան ենք անում: Պատասխանը եղավ, թե՝ արտասահմանում կարծիք կա, որ Հայաստանում հավատքի համար հետապնդում ու հալածում են: Հետո նրանցից մեկը ժամացույցին նայելով՝ մյուսին ասաց. «Սուրեն Մանվելովիչն այսօր հավաքույթ ունի երրորդ մասում, տասնհինգ րոպե է մնացել, ուշանում է, թող գնա»: Ձեռքն իմ ուսին դնելով՝ ասաց.

- Այսուհետև ազատ գործի՛ր, մենք քեզ թիկունք կլինենք:

Իրոք, այդ օրը մենք հավաքույթ ունեինք, և ես ուշանում էի: Ձեռք սեղմելով բաժանվեցինք: Ես դեռ կանգնած էի, երբ նրանք, մի հարյուր հիսուն մետր հեռանալուց հետո, նորից դարձան դեպի ինձ: Ես էլ ընդառաջ գնացի, և երբ հասանք իրար, նրանցից մեկն ինձ ասաց.

- Հակոբ եղբայրը մահամերձ է, գիտե՞ք:

Ես զարմացա: Երեք օր հետո Հակոբ եղբայրը ննջեց:

Երբ աշխատանքն ավարտվել էր, ինձ կանչեցին շրջսովետի գործկոմ՝ նախագահի առաջին տեղակալի մոտ: Ես մտածեցի՝ երևի հանձնարարություններ ունի տալու և սովորականի պես գնացի: Երբ դուռը բացեցի ու մտա, նրա մոտ տեսա քաղաքացիական հագուստով չորս-հինգ հոգու: Իմ ներս մտնելուն պես նա բարկացած տոնով, աթոռը ցույց տալով ասաց՝ նստի՛ր: Մի փոքր հուզվածություն զգացի: Բարկացած տոնով ինձ հարցրեց.

- Այդ երբվանի՞ց ես հավատացյալ դարձել, որ մենք էլ տեղեկություն չունենք: Ինչ-որ Հիսուսի ես հավատում... Պետք է թողնես այդ Հիսուսին:

Ես պատասխանեցի, որ ոչ մի դեպքում այդ բանը չի կարող լինել:

Նա ինձ ասաց.

- Պետք է թողնես, որպեսզի մենք համատեղ աշխատենք:

- Դուք աշխատանքով ինձ մի՛ վախեցրեք:

- Եթե չաշխատես, քո երեխաներին ո՞վ պետք է պահի:

- Հիսուսը կպահի:

Իմ այս պատասխանից հետո ավելի բարկացած ասաց.

- Քո նմանների տեղը սպիտակ արջերի մոտ է:

- Արդյոք այդ բախտը ես ունե՞մ, որ իմ Հիսուսի համար արջերի մոտ աքսորվեմ:

Նա պահանջեց, որ թողնեմ Հիսուսին: Ես անմիջապես պատասխանեցի.

- Այս շենքի տանիքին դրոշակ է ծածանվում, և եթե ինձ բարձրացնեք նրա տեղում ու գնդակահարեք, ես սիրով, շնորհակալությամբ կընդունեմ այդ մահը և կմիանամ իմ Հիսուսին...

Այդ պահին նա իր երկու ձեռքերի մատներն ագուցեց ու դրեց ճակատին, գլուխն իջեցրեց սեղանի վրա, հետո բարձրացրեց ու ասաց՝ լավ...

Երբ ես դուրս եկա, արդեն մութ էր: Զգացի, որ քրտնած եմ, ու երբ հասա երկրորդ հարկի աստիճանահարթակին, լացս չկարողացա պահել, սկսեցի հեկեկալ, գոհանալ ու փառաբանել Հայր Աստծուն, որ ինձ արժանի է սեպել սպառնալիքի, արհամարհանքի, հալածանքի պատվին...

Մի քանի օր հետո աշխատանք էի փնտրում...

Ես չեմ կարող չհիշատակել ընտանիքիս հանդեպ Հայր Աստծու ողորմությունը: Ընտանիքս բաղկացած է տասը հոգուց, և այն ժամանակ միայն ես էի աշխատում, սակայն ինձ էլ հավատքի համար աշխատանքից հեռացրին:

Երեխաներիցս մեծը նոր էր չափահաս դարձել ու չէր աշխատում կամ էլ աշխատելու դեպքում փողը տուն չէր բերում: Մյուսները դպրոցական էին, չորսը սովորում էին բարձրագույն ուսումնական հաստատություններում:

«Տղայ էի ու ծերացայ, բայց արդարը անփէս եղած չտեսայ, կամ անոր զաւակը՝ հաց մուրացող» (Սաղմոս 37:25): Աշխատանք ունենալու նպատակով գնացի «Երքաղվերնախագիծ» ինստիտուտ: Ինձ շատ սիրով ընդունեցին, տնօրենը զրուցեց ինձ հետ և աշխատանքի ընդունեց ինստիտուտի նախապատրաստական բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ: Այնտեղ իմ աշխատավարձը, պարգևատրումների հետ միասին, երեք ու կես անգամ բարձր էր իմ նախորդ աշխատավարձից: Տերը ինձ աշխատանքային եռանդ էր տվել, իմ ով լինելը նոր շրջապատում ինձ ստիպում էր լինել ճշմարիտ, ճշտապահ և աշխատասեր: Շատ դեպքեր են եղել, որ աշխատանքից հետո նորից եմ գնացել օբյեկտ՝ չափագրումներ կատարելու կամ գծագրերում ճշտումներ կատարելու:

Հետո ես հասկացա, որ այս ամե-

նը նրանք նկատում են, և շուտով ինստիտուտի պատվո տախտակի վրա գերազանց աշխատողների նկարների կողքին նկատեցի նաև իմ նկարը: Թող Աստված փառավորվի:

Կարճ ժամանակ հետո տնօրենը իմացավ ընտանիքիս ծանրաբեռնվածության և այն մասին, որ իմ երկու աղջիկները սովորում են պոլիտեխնիկական ինստիտուտում: Նա համաձայնեց նրանց երկուսին էլ աշխատանքի ընդունել ինստիտուտում՝ որպես տեխնիկ գծագրողներ: Սա դարձյալ հայր Աստծու մեծ ողորմությունն էր: Այս ամենին զուգընթաց, գյուղում մեր ընտանիքին նվիրեցին խաղողի, դեղձի ու խնձորի այգիներ:

Պետք է ասեմ, որ իմ ընտանիքը այդ նեղ տարիներին ոչ մի նեղություն չքաշեց, և այսօրվա դրությամբ իմ ընտանիքի բոլոր անդամները, սկսած իմ զավակներից մինչև ծոռներս, բոլորը հավատքի և ծառայության մեջ են:

Ահա այս ամենի համար գոհանում եմ Աստծուց, որ ինձ իմ նեղ պահին մենակ չթողեց, ինձ դարձրեց անվախ հանուն երկնային ճշմարտության, դարձրեց անձնուրացության պատրաստ: Թող այս ամենում փառավորվի Աստված: Ամեն:

Սուրեն եղբայր, ք. Երևան

Ո՞ւմ կարծիքն է կարևոր

Կարևոր է ոչ թե մարդկանց կարծիքը, այլ այն, թե Աստված ինչ է կարծում:

Մի ջութակահար համերգ է տալիս հինգ հազար հոգու համար: Համերգի վերջում բոլորը նրան ծափահարում էին:

Բայց նա տխուր էր, և ներկաներից մեկը հարցրեց.

- Ինչո՞ւ ես տխուր, դու շատ լավ նվագեցիր, բոլորը ծափահարում էին:

Ջութակահարը պատասխանեց.

- Նայի՛ր առաջին շարքում նստած մարդուն. նա չի ծափահարում:

- Եվ այդ մի մարդու պատճառով դու տխրե՞լ ես:

- Գիտե՞ս ով է նա. նա իմ ուսուցիչն է, նա է ինձ նվագել սովորեցրել: Ինձ համար կարևոր է նրա ծափահարությունը, ոչ թե բոլոր մարդկանց:

ՍՐՏԻ ՔԱՐԸ

Ուրոլոգիայի բաժնի մի հիվանդասենյակում, կողք-կողքի դրված մահճակալներից մեկի վրա պառկած միջահասակ տղամարդը ծանր ցավից տնքում էր: Հարևան մահճակալին նստած հիվանդն ամրակազմ ու կարմրաթուշ, մոտ հիսուն տարեկան մի տղամարդ էր: Նա ցավակցաբար նայում էր հիվանդասենյակի իր հարևանի տանջանքներին ու հոգոց հանելով ասում.

- Մի՛շա, Մի՛շա, դու իզուր ես Աստծուն հավատում: Դու դրանից ոչինչ չես շահում՝ տանջվում ես ինչպես ես և կմեռնես ինչպես բոլորը:

- Նիկոլա՛յ, դու ինչ-որ չափով ճիշտ ես,- մեղմորեն համաձայնեց Միշան: Հավատացյալները հիվանդություններից ապահովագրված չեն, սակայն երիկամների քարերը մանրուք են՝ համեմատած սրտի քարերի հետ:

- Դու ինչ-որ այն չես ասում, Մի՛շա,- ասաց անհավատը՝ նկատելով, որ հիվանդասենյակի բոլոր հիվանդներն իրենց են լսում: - Ես բժշկությունից քիչ թե շատ հասկանում եմ և գիտեմ, որ քարեր լինում են երիկամներում, լեղապարկում, սակայն ոչ սրտում:

- Իսկ ես նկատի ունեմ անհավատության քարերը, որոնք մարդու սիրտն են քարացնում,- ասաց քրիստոնյան,- այդ ժամանակ սիրտը նմանվում է դագաղի, որի վրա դրված է աթեիզմի ծանր քարը: Սակայն Աստված կարող է այդ սիրտը փոխել նորով, որն ազատ է անհավատությունից:

Նիկոլայը մահճակալից վեր թռավ ու սկսեց նյարդային քայլել սենյակով մեկ:

- Լսի՛ր, Միխայիլ, եթե Աստված է ճշմարիտը, ապա ինչո՞ւ ես դու էլ ինձ նման տառապում ցավերից, չէ՞ որ դու սուրբ ես, թե՞ դու էլ ինձ նման մեղավորի մեկն ես:

- Սուրբ լինել դեռ չի նշանակում լինել անմեղ: Սուրբ է այն մարդը, որն իրեն հանձնել է Աստծուն: Չեմ թաքցնի, ես էլ երբեմն մեղք եմ գործում, սակայն աշխատում եմ մեղքի մոլախոտը արմատախիլ անել իմ ներսից: Իսկ եթե Աստված ինձ պատժում է, ապա փառք Նրան դրա համար, Նա ինձ դաստիարակում է:

- Ենթադրենք դա այդպես է,- համաձայնեց անհավատ ընդդիմախոսը,- բայց հիմա դու ինչի՞ համար ես տանջվում: Անձամբ ես հիվանդությունը դիտում եմ որպես մի չար բան:

- Սխալվում ես, բարեկա՛մս: Օրինակի համար դիտարկենք օձի կամ մեղվի թույնը: Ի՞նչ ես կարծում, դրանք բարի՞ք են, թե՞ չարիք:

- Իհարկե չարիք են:

- Իսկ եթե այդ թույներից դեղամիջոց են ստանու՞մ...

- Դա արդեն այլ բան է:

- Տեսնո՞ւմ ես,- աշխուժացավ Միխայիլը,- այդպիսի բաների մասին չի կարելի միանշանակ կարծիք հայտնել, դա թեթևամտություն է: Որոշ ժամանակ առաջ սովը համարում էին մարդկության մեծագույն չարիքներից մեկը, իսկ հիմա քարոզում են սոված մնալը, նույնիսկ գտնում են, որ երբ Աստծու Խոսքի համեմատ մարդիկ ծոմ են պահում, նրանց օրգանիզմը մաքրվում է բոլոր թունավոր կուտակումներից: Այդպես էլ հիվանդություններն են, Կո՛լյա: Դրանք մեզ մաքրում են, Աստծու նկատմամբ մեզ ավելի զգոն դարձնում, իսկ շրջապատի նկատմամբ՝ ավելի բարի, նրբանկատ և զգայուն:

- Այդ ամենը հեքիաթ է,- բորբոքվեց անհավատը: (Աստծու մասին միայն մի հիշեցումը բավական է, որպեսզի անհավատի ներսում մեխանիկորեն գործի դրվի աստվածամերժության մեխանիզմը): - Տե՛ս, թե ինչքան դժբախտություններ ու աղետներ կան երկրի վրա: Եթե Աստված լիներ, ապա այդ ամենը չէր կատարվի:

Հավատացյալը հեզությամբ փորձում էր ճիշտ ուղղության վրա ուղղորդել Նիկոլայի մտքերը.

- Դու նորից մակերեսորեն ես մոտենում հարցին: Այս պահին դու նման ես այն երեխային, որը ոտքը խփելով աթոռին՝ վայր է ընկել ու իրեն պատճառած ցավի համար մեղադրում է աթոռին: Այստեղ ո՞րն է աթոռի մեղքը, չէ՞ որ լավ, ամուր աթոռներ ունենալը հաջողություն է: Կամ էլ նման ես այն մարդուն, ում ներկայությամբ ավտովթար է տեղի ունեցել. ու նա սկսում է մեղադրել ավտոմեքենաներին ու միևնույն ժամանակ զանգում է շտապօգնություն և նույնպիսի մի մեքենայով տուժածներին տեղափոխում հիվանդանոց: Չէ՛, Կո՛լյա, այդպիսի հարցերում Աստծուն մեղադրելն առնվազն անսկզբունքայնություն է: Ամեն բանում մեղավոր է մարդը, որը ճիշտ չի օգտվում տեխնիկական հայտնագործություններից:

- Սակայն մեր մեղքը ո՞րն է, որ մեր քաղաքի ջուրը կոշտ է և պարունակում է մեծ քանակությամբ աղային կուտակումներ:

Հոգևորը նստեց անկողնու վրա:

- Բարեկա՛մս, ողջ մարդկությունը իրար է կապված մի թելով, ինչպես լեռնագնացները: Եթե մեկը պոկվի, ապա իր ետևից անդունդը կտանի մնացած բոլորին:

- Ես այսպես եմ հասկանում. ինչպես բոլորը, այնպես էլ ես: Ի՞նչ է, ինձ ուրիշներից շա՞տ է պետք: Միգուցե ավելի հասկանալի՞ դարձնես ասածդ:

- Տե՛ս, Կո՛լյա, երկու պետության սահմանային գոտում ինչ-որ թյուրիմացության պատճառով ընդհարում է սկսվում: Երկու կողմից էլ մարդիկ, դրդված ազգային համերաշխությու-

նից, գնում են մասնակցելու այդ պատերազմին: Նույն բանը տեղի ունեցավ նաև մարդկության հետ, որն իր նախնու՝ Ադամի միջոցով ներքաշվեց մեղքի մեջ, ինչի արդյունքում էլ բոլորս դատապարտվեցինք մահվան:

Անհավատ ընդդիմախոսը գլխում փորձում էր տեղավորել Միխայիլի ասածը, սակայն ոչ մի կերպ չէր կարողանում այն մարսել: Նա համաձայն էր զրուցակցի դատողության հետ, սակայն ինչ-որ բան թույլ չէր տալիս նրան դա անել: «Իսկ եթե Աստված կա՞... Ո՛չ, ո՛չ... ավելի լավ է, որ Նա չլինի»,- մտածում էր նա:

- Չէ՛, ինձ ինչ-որ չեն հասնում այդ բարձր գաղափարները,- կոտրված ասաց Նիկոլայը:

Միխայիլը նորից ու նորից փորձում էր ներկայացնել արարչագործության մեծությունն ու հրաշափառությունը, որի ընթացքում նրա ցավերը նահանջեցին, իսկ Նիկոլայը բռնեց կողն ու սկսեց տնքալ:

Հակառակի նման գավառական հիվանդանոցի միակ վիրաբույժին շաբաթ և կիրակի օրերին հրավիրել էին գիտաժողովի, և բաժնում մնացել էին միայն հերթապահ բուժքույրերը: Նրանք արեցին ինչ որ կարողացան, մինչև բժշկի գալը Կոլյան արդեն վիրահատման ենթակա չէր: Մի քանի ժամ հետո նա մահացավ:

Այս զրույցին ներկա գտնվողները շատ տպավորված էին: Նրան ճանաչողները շատ բարի բաներ էին պատմում նրա մասին, իսկ մեկն էլ, թե՝ «Թող Երկնքի Արքայությանն արժանանա...»: «Ա՛յ, դա արդեն հնարավոր չէ»-, կիսաձայն շշնջաց Միխայիլը:

ՏԵՐՆ ԱՐՄԱՏԱՊԵՍ ՓՈԽԵՑ ԻՄ ԿՅԱՆՔԸ

Ես Ալեքսանդրան եմ: Սեպտեմբեր ամսից ապրում եմ Կուրգանովսկում: Ուզում եմ վկայել իմ ապաշխարության մասին:

Ես երեք տարեկան եմ եղել, երբ ապաշխարել է իմ տատիկն ու ինձ էլ իր հետ միշտ տարել է եկեղեցի: Հետագայում, երբ արդեն մեծ էի, պարբերաբար գնում էի քրիստոնեական ճամբարներ, մասնակցում երիտասարդական հավաքույթների: Ու ես միշտ գիտեի, որ երկնքում Աստված կա, որովհետև երբ իմ կյանքում ինչ-որ բան այնպես չէր ստացվում, ես դիմում էի Աստծուն: Երբ ավարտեցի միջնակարգ դպրոցը, որոշեցի կյանքս դասավորել այնպես, ինչպես ես էի ճիշտ համարում: Ես արդեն գիտեի, թե որտեղ և ինչ մասնագիտություն պետք է ստանամ, որտեղ պետք է ապրեմ: Որոշ ժամանակ անց արդեն գիտեի, թե ում հետ եմ ուզում ամուս-

նանալ՝ գիտենալով հանդերձ, որ այդ մարդը բոլորովին չի ճանաչում Աստծուն:

Եվ այդպես ես կառուցում էի իմ կյանքը... ինչ-որ բան ստացվում էր, ինչ-որ բան՝ ոչ, բայց վեց տարի առաջ՝ 2012թ., Աստված կպավ իմ սրտին: Ես զղջացի ու տեսա, որ իսկապես մեղավոր մեկն եմ, սակայն ապաշխարության պահից մինչև ջրի մկրտություն անցավ մեկուկես տարի: Այդ մեկուկես տարվա ընթացքում ես ամուր բռնել էի իմ կյանքի որոշ ոլորտներ և չէի ուզում դրանք հանձնել Աստծուն: Չգիտես ինչու, ինձ թվում էր, թե Աստված անպայման ամեն բան կփչացնի: Ես արդեն ունեի իմ կյանքի ծրագիրը, որով ուզում էի շարժվել: Այդ ամենն Աստծու կամքին թողնելն ինձ համար շատ դժվար էր: Սակայն եկավ մի պահ, որ ես եկա Նրա առաջ և ասացի. «Տե՛ր, Քեզ եմ հանձնում իմ կյանքը, հույսերը, ձգտումները, իմ ազատ ժամանակը, իմ հեղինակությունը, իմ ֆինանսները... Տե՛ր, Դու ուղղակի վերցրո՛ւ և տնօրինի՛ր ինչպես Դու ես կամենում»:

Ես որոշեցի Նրա հետ ուխտի մեջ մտնել: Եկեղեցում իմ մկրտության օրն արդեն նշանակված էր՝ նոյեմբերի 30-ը: Ես այդ ժամանակ Մոսկվայի ավիաընկերություններից մեկում օդուղեկցորդուհի էի աշխատում: Աշխատանքային կանոնակարգն այնպիսին էր, որ ես մի ամիս առաջ կարող էի տեղյակ լինել իմ չվերթներից: Նայում եմ՝ նոյեմբերի 30-ը ազատ օր է, ուրախանում եմ, ուրեմն խնդիր չի լինի: Բանն այն է, որ եթե դիսպետչերը փոխում է անձնակազմը, ապա թռիչքից երեք օր առաջ այդ մասին պետք է տեղեկացնի անձնակազմի անդամներին: Անցնում է երկու շաբաթ՝ փոփոխություն չկա... Մկրտությանս մնացել է երեք օր, փոփոխություն չկա՝ ազատ եմ, ամեն բան այնքան հաջող է դասավորվում... Եվ հանկարծ, մկրտությանս նախորդ օրն ինձ է զանգում դիսպետչերն ու հայտնում, որ ես հաջորդ օրը թռիչքի եմ: «Ի՞նչ եք ասում, ես չեմ կարող վաղը թռչել, ես վաղը միջոցառում ունեմ»,- ես այդ ժամանակ մկրտություն չասացի, այլ կոչեցի «միջոցառում»: Նա ինձ ասում է.

- Դե՛, ուրեմն ես ձեզ հիմա կմիացնեմ շտաբի պետի հետ, դուք նրան բացատրություն տվեք ձեր հրաժարման մասին:

Ես շտաբի պետին բացատրում եմ, որ չեմ կարող թռչել, իսկ նա ինձ պատասխանում է.

- Դե՛, դա արդեն աշխատանքից հեռացում է: Միակ բանը, որ ձեզ կարող է փրկել, անաշխատունակության մասին թերթիկն է:

- Ես հիվանդ չեմ, անաշխատունակության թերթիկ չեմ կարող ներկայացնել,- ասում եմ նրան:

- Դե՛, ուրեմն աշխատանքից կհեռացնենք:

Ես դեռ կարգին չեմ էլ պատկերացնում, թե ինչ է ինձ հետ կատարվում, ներս է մտնում այն աղջիկը, որի

հետ համատեղ վարձել էինք այդ բնակարանը, ու ինձ ասում է.

- Ես որոշել եմ մենակ ապրել, այնպես որ վաղվանից քեզ այլևս այստեղ չտեսնեմ:

- Ի՞նչ ես խոսում,- ասում եմ,- դու լավ ես հասկանում, որ Մոսկվայում մի օրից էլ քիչ ժամանակի ընթացքում բնակարան գտնելն անհավանական բան է:

- Ես ոչինչ չեմ ուզում իմանալ... եթե վաղը մինչև կեսօր դու դուրս չեկար այս բնակարանից, ապա իրերդ կհայտնվեն աստիճանների վրա,- պատասխանում է նա:

Ապշահար նստած՝ մտածում եմ. «Աշխատանք արդեն չունեմ, բնակարան համարյա չունեմ... հետո՞ ինչ է լինելու»: Իսկ հետո եղավ ամենացավալին:

Այդ ժամանակ ես շփվում էի մի անապաշխար երիտասարդ տղայի հետ, որն ապրում էր այլ քաղաքում: Ես նրան ասել էի, որ հավատացյալ եմ և պատրաստվում եմ ջրով մկրտվել: Նա ինձ համոզում էր՝ասելով. «Արի՛ ամուսնանանք, հետո ինչ ուզում ես արա»: Գիտե՞ք, ամենատարօրինակն այն էր, որ նույնիսկ իմ հավատացյալ ընկերներից կային մարդիկ, ովքեր ասում էին. «Ամուսնացի՛ր նրա հետ, որովհետև հետագայում այդպիսի մեկին հնարավոր է չգտնես»: Ես հասկանում էի, որ այդ ամենը հակառակորդի որոգայթներն են, և այդպես վարվել չի կարելի: Եվ ահա, նա զանգում է ինձ ու ասում.

- Դե ինչ, դու որոշեցի՞ր մկրտվել:

- Այո՛, վաղը մկրտվում եմ:

Այս խոսքերից հետո այն մարդը, որ դեռ երեկ ասում էր, թե որքան է ինձ սիրում, դրսևորեց իր ողջ կատաղությունը իմ և մեր եկեղեցու հանդեպ: Եվ այդքանով ավարտվեցին մեր հարաբերությունները:

Խոհանոցում, հատակին նստած լալիս եմ ու ասում. «Տե՛ր, եթե այս ամենը Քո բարի կամքի դրսևորումն է իմ կյանքում, ապա ես Քեզ չեմ հասկանում: Այն ամենը, ինչ իմ կյանքում արժեք էր ներկայացնում, փուլ եկավ»: Գիտե՞ք, եթե մեկն ինձ ասեր, որ քսանչորս ժամվա ընթացքում պետք է անցնեմ այդպիսի փորձություններով, ապա ես կասեի, որ ես ուղղակի չեմ կարող, բայց այդ պահին Աստված իմ կողքին էր. Նա ինձ մխիթարում և զոտեպնդում էր:

Հաջորդ օրը ես ջրով մկրտվեցի: Առաջ ինձ թվում էր, թե ջրի մկրտությունն ուղղակի ձևական արարողություն է, սակայն այդ պահին ես

ապրեցի մի զգացում, որը չեմ կարող համեմատել ոչնչի հետ. զգում ես, որ Աստված Ինքը քեզ հետ դաշինք է կնքում, և դրանից հետո ոչ ոք և ոչինչ քեզ Նրանից չի կարող խլել:

Այդ հրաշալի ապրումների մեջ ետ դարձա տուն և, ինչպես խոստացել էր ընկերուհիս, իմ իրերն արդեն աստիճանահարթակի վրա էին: Ես դրանք ուղղակի վերցրի ու հեռացա: Մի հեռավոր ազգականուհի ունեի, որն ինձ առաջարկեց մի որոշ ժամանակ իր տանն ապրել:

Երկուշաբթի զանգում եմ իմ անմիջական ղեկավարին, զեկուցում, որ թռիչքի դուրս չեմ եկել, որովհետև գնացել էի ջրի մկրտության: Հարցնում եմ, թե հիմա իմ հարցն ինչպես պիտի կարգավորվի: Նա ինձ ասում է, որ ինձ ոչ ոք էլ չի հեռացնի, որովհետև ես լավ աշխատակից եմ, ունեմ բազում գովեստներ թե անձնակազմերից, թե՛ ուղևորներից, որ ես ընդամենը ղեկավարությանը պետք է բացատրագիր ներկայացնեմ, ուղղակի պետք չէ, որ այնտեղ գրեմ իրական պատճառը: Ինչ ուզում է գրեմ, միայն ոչ «ջրի մկրտություն»: Ես հիմա ամաչում եմ այդ պահին իմ մտադրություններից, որովհետև երեկ մկրտվել եմ, իսկ այսօր արդեն պատրաստ եմ հնազանդվել մոլորեցնողի կամքին ու սուտ խոսել: Բայց, փառք Աստծու, Նա ինձ ժամանակին սթափեցրեց, և ես հաստատակամ հայտարարեցի. «Ես սուտ չեմ խոսելու, կգրեմ այն, ինչ եղել է»: Իմ ղեկավարն ինձ ասում է.

- Գրի՛ր ինչ ուզում ես, սակայն այդ դեպքում ես չգիտեմ, թե ինչպես կդասավորվի քո ապագան:

Ես իմ բնույթով ամաչկոտ մարդ եմ... մտածում եմ՝ կգնամ տնօրենի մոտ, կիսաձայն նրան կպատմեմ մկրտության մասին, իսկ դրանից հետո ինչ ուզում է թող լինի: Գնում եմ տնօրենի աշխատասենյակ... իսկ այնտեղ ով ասես չկա: Մտածում եմ՝ ինչպե՞ս պատմեմ մկրտության մասին, բոլորը կիմանան, բայց միևնույն ժամանակ մտածում եմ՝ Աստված է թույլ տվել, որ այդպես լինի, ուրեմն թող լինի ինչ որ լինելու է:

Մոտենում եմ տնօրենին և բացատրում իրավիճակն ինչպես որ կա: Նա ինձ ասում է.

- Դե՛, դա ուղղակի հեռացում է, սակայն եթե նույնիսկ չհեռացնենք, դու պիտի մոռանաս բոլոր լավ երկրների մասին (դրանք բոլոր տաք երկրներն են, միջազգային թռիչքները), ստիպված ես թռչել Անադիր, Ուրենգոյ, Նիժնի Վարտովսկ, Սուրգուտ... շատ վատ ինքնաթիռներով:

Ես մտածում եմ. «Տե՛ր, ես այլ տեղեր եմ ուզում թռչել...», սակայն միևնույն ժամանակ էլ մտածում եմ. «Դե ոչինչ, գոնե գործազուրկ չեմ լինի»:

Հաջորդ օրն ինձ է զանգում դիսպետչերն ու հայտնում, որ ես չորս օրով թռչելու եմ Վիետնամ: Դա, իհարկե, արտասահմանյան մերձարևադարձային երկիր է: Ես նրան հարցնում եմ. «Իսկ Անադի՞րը, Սուրգու՞տը»: Նա ինձ ասում է. «Դուք

դե՞մ եք»: Ասում եմ. «Չէ՛, ի՞նչ եք ասում»: Դրանից հետո այն ողջ ընթացքում, որ ես աշխատեցի այնտեղ, ոչ մի վատ չվերաբերվեց ինձ: Երբ իմ կոլեգաներն օդանավակայանում ինձ հանդիպում էին, հարցնում էին. «Լսի՛ր, դու ի՞նչ ես արել, որ բոլոր լավ երկրները քեզ են բաժին հասնում»: Ես նրանց պատասխանում էի. «Ես ընդամենը ջրով մկրտվել եմ»: Գիտեք, դա շատ լավ առիթ էր իմ աշատանքային ընկերներին վկայելու, թե իմ կյանքում ինչ է արել Աստված:

Կարճ ժամանակ անց ես գնում եմ եկեղեցի, և քույրերից մեկը բանալիներ է մեկնում ինձ.

- Բոլորովին անվճար, ապրի՛ր ինչքան ուզում ես, միայն թե քեզ Շերեմետևո օդանավակայան հասնելու համար բավականին ժամանակ պետք կլինի, որովհետև բնակարանը գտնվում է Վնուկովոյի մոտ:

- Դու երևի չես հավատա, բայց մի շաբաթ առաջ ինձ տեղափոխել են Վնուկովո,- ուրախ-ուրախ ասում եմ նրան:

Եթե առաջ աշխատանքի հասնելու համար ես կորցնում էի մոտ երեք ժամ, ապա հիմա ես ուղղակի, հաճույքի համար կես ժամ ոտքով եմ քայլում:

Եվ վերջապես, երրորդ փորձությունը՝ այն երիտասարդը, որն ինձ հետ շատ վատ վարվեց... զանգեց ինձ, ներողություն խնդրեց իր կոպիտ վերաբերմունքի համար և վերջում ավելացրեց, որ ես ամուր հիմք եմ գտել, ճիշտ վայրում եմ և ճիշտ ուղի եմ ընտրել: Այս ամենն ինձ ասաց անհավատ մարդը, և այն ինձ համար շատ ավելի արժեքավոր էր, քանի որ Սուրբ Գրքում էլ է գրված, որ Քրիստոսն է մեր վեմը:

Աստված իմ կյանքը փոխեց արմատապես. այն վայրերից ու շրջապատից, որոնց ես սովոր էի, Աստված ինձ հանում էր և տանում այնտեղ, որտեղ կոտրվում էր իմ էգոիզմը, ինքնասիրությունը, զզվելու հատկությունը: Աստված այնպես է փոխում իմ բնավորությունը, որ երևի նախկինում ինձ ճանաչողները զարմացած են իմ խոսքերից:

Իմ թե՛ հոգևոր, թե՛ մարմնավոր ծանոթ-բարեկամներն ինձ ասում են. «Լսի՛ր, դու արդեն 30 տարեկան ես, ամուսնացած չես, նույնիսկ լավ վարձատրվող աշխատանք չունես... և դու ասում ես, որ երջանի՞կ ես»:

Գիտե՞ք, ես այս ամենն այսօր վկայում եմ ոչ թե նրա համար, որ այն յուրահատուկ է, այլ նրա համար, որ երբ ձեզ թվա, թե Աստված ձեր կյանքը տակնուվրա է անում, իմանաք, որ դա ոչ թե ձեզ վնասելու համար է, այլ որպեսզի ձեր մեջ կառուցի մի նոր, ավելի հաստատուն ու հավիտենական բան: Որովհետև այն, ինչ Նա է կառուցում, Նրա թագավորության ու հավիտենության համար է: Եվ հիմա իմ միակ ցանկությունն է, որ Աստված երևա մեր կյանքերում:

ԹԱԳԱՎՈՐԻ ԱՅՑԸ

Մի թագավոր ցանկանում է ծպտված շրջել քաղաքում և տեղեկություն ստանալ ժողովրդի բուն վիճակի մասին: Նա աղքատի հագուստով, ցնցոտիներ հագած, սկսում է այցելել հարուստների տները, բայց առանց բացառության բոլորն էլ վռնդում են նրան: Վերջապես գնում է մի աղքատ ծերունու մոտ և աղաչում, որ իրեն ուտելիք և պառկելու տեղ տա: Ծերունին սիրով ծառայում է աղքատին: Հաջորդ առավոտյան, երբ թագավորը պալատ է գալիս, մունետիկին հանձնարարում է հայտարարել, որ արքան մայրաքաղաքում պիտի շրջի և իր մտերիմներին այցելի, ուստի ամեն ոք թող պատրաստ լինի: Բոլոր հարուստներն ու նախարարները սպասում էին, որ թագավորն իրենց պիտի այցելեր, բայց թագավորը ոչ մի հարուստի դռան առջև չի կանգնում: Բավարար շրջելուց հետո նա գտնում է իրեն հյուրընկալող աղքատ ծերունուն և նրան իմացնելով, որ երեկվա աղքատ մուրացկանն ինքն է եղել, վարձատրում է նրան փառավոր պարգևներով:

Մատթ. 25:34-40-ում կարդում ենք. *«Այն ատեն թագավորը իր աջ կողմը եղողներուն պիտի ըսէ. «Եկէ՛ք, իմ Հօրս օրհնածները, աշխարհի սկիզբէն ձեզի համար պատրաստուած թագաւորութիւնը ժառանգեցէք: Վասն զի անոթեցայ և ինձի ուտելիք տուիք, ծարաւեցայ ու ինձի խմցուցիք, օտարական էի, ինձի ներս առիք, մերկ էի, ինձի հագցուցիք, հիւանդ էի, ինձի տես եկաք, բանտի մէջ էի, ինձի եկաք»: Այն ատէն արդարները անոր պատասխան պիտի տան ու ըսէն. «Տե՛ր, ե՞րբ քեզի անօթեցած տեսանք ու կերակրեցինք, կամ ծարաւած՝ ու խմցուցինք: Ե՞րբ քեզի հիւանդ կամ բանտի մէջ տեսանք ու քեզի եկանք»: Թագաւորը պատասխան տալով պիտի ըսէ անոնց. «Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, քանի որ իմ այս եղբայրներէս ամենէն պզտիկներէն մէկուն ըրիք, ինձի ըրիք»:*

ԵՐԲԵՔ ՄԻ՛ ԱՆԻԾԵՔ

Մի տատիկ չէր սիրում իր հարևանուհուն և անընդհատ վատ խոսքեր էր ասում նրան: Եվ մի անգամ էլ անիծում է. «Ծող ոտքերդ չորանան»: Եվ ի՞նչ եք կարծում, ո՞ւմ ոտքերը «չորացան»:

Շատ չանցած այս չարախոսող տատիկը հիվանդանում է ու անկողին ընկնում: Նրա ոտքերն ընդարմանում են, և այլևս չի կարողանում անկողնուց վեր կենալ:

Սիրելինե՛ր, երբեք մի անիծեք ոչ որի, այլ ընդհակառակը՝ օրհնե՛ք մարդկանց, անգամ նրանց, ովքեր ձեր վատն են կամենում:

Եթե ուզում ես ինքդ օրհնված լինել, ուրեմն օրհնի՛ր ուրիշներին: Մի քրիստոնյա ընտանիքում բոլորը տնից դուրս գալիս ամեն անգամ միմյանց օրհնում են՝ աշխատանքի գնան, դասի, թե պարզապես զբոսնելու: Եվ գիտե՞ք ինչ, այդ ընտանիքում ոչ որ երբեք չի հիվանդանում: Իսկ նրանց տատիկը, որ արդեն 85 տարեկան է, օգնում է ընտանիքի անդամներին և անգամ հարևաններին՝ ինչով կարողանում է:

Օրհնեցե՛ք և օրհնությո՛ւն եղեք ձեր ընտանիքների, շրջապատի ու նաև ձեր բնակավայրի համար, քանզի Աստվածաշնչում գրված է, որ արդարների օրհնությունով անգամ քաղաքը կբարգրանա, բայց ամբարիշտների բերանով կկործանվի (Առակաց 11:11):

ՏԽՈ՞ՒՐ ԵՍ

Ինչո՞ւ կը ցաւնաս, ով իմ հոգիս, եւ ինչո՞ւ իմ ներսիդիս անհանգիստ ես. Ապուծոյ յոյսա, վասն զի անգամ մը ևս ալ զանիկա պիտի գովեմ. Ան է իմ երեսիս փրկութիւնը ու իմ Ապուածս:

Սաղմոս 42:11

Վասն զի մէկ րոպէ իր բարկութեանը մէջ է, բայց Իր հանութեանը մէջ է մեր բոլոր կեանքին ապենը. Իրիկունը լաց կայ, բայց առաւօտ ուրախութիւն:

Սաղմոս 30:5

Ուրեմն ի՞նչ ըսենք այս բաներուն համար. եթէ Ապուած մեր կողմն է, ո՞վ պիտի ըլլայ մեզի հակառակ:

Հռովմեացիս 8:31

Քու Տէր Ապուածդ քու մէջդ զօրաւոր է. Անիկա քեզ պիտի փրկէ. Անիկա քեզի համար ուրախութեամբ պիտի զուարճանայ, ու Իր սիրովը քեզի բողոքիւն պիտի կրայ, եւ Քու վրադ ցնծութեամբ պիտի ուրախանայ:

Սոփոնիայ 3:17

Տէրը մօտ է անոնց՝ որոնց սիրտը կոտրած է, ու հոգիով խոնարհածները կ՚ապրեցնէ:

Սաղմոս 34:18

Ուրախ եղէք Տէրոջմով ամէն ատեն. դարձեալ կ՚ըսեմ, ուրախ եղէք:

Փիլիպեցիս 4:4